ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

12.09.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/47

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15733-17 գրությամբ «Դյուրլանգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2785 գրության հիման վրա, 29.08.2017թ. թիվ 03/26-3/15733-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Դյուրլանգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **«Դյուրլանգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

Խորհրդի 30.08.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/15799-17 գրությանն ի պատասխան՝ «Դյուրլանգ» ՍՊԸ-ն 01.09.2017թ. գրությամբ հայտնել է, որ մայիսի 20-ին ոչ ավտոմատ ծանուցման միջոցով տեղեկացել է, որ «Դյուրլանգ» ՍՊԸ-ն մի քանի չափաբաժիններով հաղթող է ճանաչվել: Հուլիսի 4-ին Ընկերությունը «armeps» համակարգից ստացել է էլեկտրոնային հաղորդագրություն (ժամը 12:50), որին կցված ֆայլը ընթեռնելի չի եղել Ընկերության աշխատանքային համակարգչի ծրագրային խնդիրների պատճառով, որի կարգավորումը տևել է 3-4 օր: Հուլիսի 5-ը եղել է ոչ աշխատանքային օր:

Հուլիսի 6-ին պարզաբանում ստանալու նպատակով Ընկերության աշխատակցի կողմից բազմիցս փորձ է արվել կապ հաստատել ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանման հետ՝ 010 66 24 94 հեռախոսահամարով, սակայն չհաջողվելով կապ հաստատել տվյալ մրցույթի համակարգողի հետ՝ Ընկերության աշխատակիցը իր անձնական համակարգչի միջոցով էլեկտրոնային նամակով դիմել է Պատվիրատուին, որում նշել է անձնական հեռախոսահամարը որպես կապի միջոց:

Հուլիսի 7-ի առավոտյան, Պատվիրատուն արձագանքելով Ընկերության նամակին, կապ է հաստատել Ընկերության հետ և տեղեկացրել է խնդրի վերաբերյալ, որից հետո անմիջապես «Դյուրլանգ» ՍՊԸ-ն ուղարկել է շտկումները, սակայն օրենքով հատկացված մեկօրյա ժամկետը սպառվել էր հուլիսի 6-ին:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է Խորհրդին հաշվի առնել վերոնշյալ փաստերը և «Դյուրլանգ» ՍՊԸ-ին չընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Դյուրլանգ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 05.09.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել իր ներկայությունը, ինչպես նաև իր ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր պնդել են 01.09.2017թ. գրությամբ Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2785 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Շինանյութի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի արդյունքում մի շարք կազմակերպությունների կողմից խախտվել են ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ «Դյուրլանգ» ՍՊԸ-ի ներկայացրած որակավորման փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ (ընթացակարգի հրավերով նախատեսված մասնագիտական փորձառություն չափանիշի առկայությունը հավաստելու համար ներկայացված նմանատիպ պայմանագրի հաշիվ-ապրանքագրերով նախատեսված ընդհանուր գումարը չէր համապատասխանում պայմանագրով սահմանված ընդհանուր գնին): Մասնակցին առաջարկվել է շտկել անհամապատասխանությունը, սակայն վերջինս սահմանված կարգով շտկում չի իրականացրել (շտկված փաստաթղթերը ներկայացրել է սահմանված ժամկետի խախտմամբ): Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ մասնակցի հայտը հանձնաժողովի կողմից մերժվել է: Ընդ որում «Դյուրլանգ» ՍՊԸ-ի կողմից 06.07.2017թ. ստացվել է նամակ՝ ըստ որի Պատվիրատուի ծանուցման մեջ առկա է անճշտություն, սակայն պարզվեց, որ ծանուցման մեջ որևէ անճշտություն չկա:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 05.09.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2785 գրությամբ ներկայացրած դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2017/47 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/47 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Շինանյութի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Դյուրլանգ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

2. Ընկերությունը մի քանի չափաբաժիններով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

3. Պատվիրատուն 04.07.2017թ. «Դյուրլանգ» ՍՊԸ-ին ուղղված ծանուցմամբ հայտնել է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են «Դյուրլանգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ընթացակարգի հրավերով նախատեսված «Մանսագիտական փորձառություն» չափանիշի առկայությունը հավաստելու համար ներկայացված նմանատիպ պայմանագրի (երի) հաշիվ-ապրանքագրերով նախատեսված ընդհանուր գումարը չի համապատասխանում պայմանագրով սահմանված ընդհանուր գնին, ուստի հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունը, իսկ շտկված տարբերակը ուղարկել g.tovmasyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.07.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Դյուրլանգ» ՍՊԸ-ի, քանի որ վերջինիս հրավերով նախատեսված «Մանսագիտական փորձառություն» չափանիշի առկայությունը հավաստելու համար ներկայացված նմանատիպ պայմանագրի (երի) հաշիվ-ապրանքագրերով նախատեսված ընդհանուր գումարը չի համապատասխանում պայմանագրով սահմանված ընդհանուր գնին: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և

04.07.2017թ. առաջարկել է Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունը, սակայն սահմանված ժամկետում «Դյուրլանգ» ՍՊԸ-ն չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը (ներկայացրել է միայն 07.07.2017թ.): Հիմք ընդունելով Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը մերժել է «Դյուրլանգ» ՍՊԸ-ի հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

5. Ընկերությունը Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ հուլիսի 6-ին պարզաբանում ստանալու նպատակով Ընկերության աշխատակցի կողմից բազմիցս փորձ է արվել կապ հաստատել ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանման հետ՝ 010 66 24 94 հեռախոսահամարով, սակայն չհաջողվելով կապ հաստատել տվյալ մրցույթի համակարգողի հետ՝ Ընկերության աշխատակիցը իր անձնական համակարգչի միջոցով էլեկտրոնային նամակով պարզաբանում սատանալու նպատակով դիմել է Պատվիրատուին, որում նշել է անձնական հեռախոսահամարը որպես կապի միջոց: Այնուհետև, հուլիսի 7-ի առավոտյան Պատվիրատուն արձագանքելով Ընկերության նամակին, կապ է հաստատել Ընկերության հետ և տեղեկացրել է խնդրի վերաբերյալ, որից հետո անմիջապես «Դյուրլանգ» ՍՊԸ-ն ուղարկել է շտկումները, սակայն օրենքով հատկացված մեկօրյա ժամկետը սպառվել էր հուլիսի 6-ին:

5. <u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15733-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 23.08.2017թ. թիվ ԴՎԱ/2785 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում սրանձնած***

պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ ***հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)***:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ***հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,*** իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: ***Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկաացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:***

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ **առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից** ***փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի,*** իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի ***գնահատման արդյունքում հրավերի***

պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի համաձայն՝ ***առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝***

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) ***չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ-1-ի 7.5 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին է ուղարկում սույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Սույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած Մասնակցին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ-1-ի 8.1.2 կետի համաձայն՝ ***առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերի և սույն հրավերի 4.3 կետի «դ» ենթակետով նախատեսված փաստաթղթերի, գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի***

քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ-1-ի 8.1.3 կետի համաձայն՝ ***առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝***

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած Մասնակցին:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շինանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Դյուրլանգ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

Ընկերությունը Ընթացակարգի մի քանի չափաբաժիններով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Պատվիրատուն 04.07.2017թ. «Դյուրլանգ» ՍՊԸ-ին ուղղված ծանուցմամբ հայտնել է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են «Դյուրլանգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և պարզվել է, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշի առկայությունը հավաստելու համար Ընկերության կողմից ներկայացված նմանատիպ պայմանագրի (երի) հաշիվ-ապրանքագրերով նախատեսված ընդհանուր գումարը չի համապատասխանում պայմանագրով սահմանված ընդհանուր գնին, ուստի հիմք ընդունելով Կարգի 51-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունը, իսկ շտկված տարբերակը ուղարկել g.tovmasyan@mil.am էլեկտրոնային հասցեին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.07.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է, որ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Դյուրլանգ» ՍՊԸ-ի, մասնավորապես՝ Ընկերության կողմից «Մանսագիտական փորձառություն» չափանիշի առկայությունը հավաստելու համար ներկայացված նմանատիպ պայմանագրի (երի) հաշիվ-ապրանքագրերով նախատեսված ընդհանուր գումարը չի համապատասխանում պայմանագրով սահմանված ընդհանուր գնին, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և 04.07.2017թ. առաջարկել է Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունը, սակայն սահմանված ժամկետում «Դյուրլանգ» ՍՊԸ-ն չի ներկայացրել պահանջվող փաստաթղթերը (ներկայացրել է միայն 07.07.2017թ.): Հիմք ընդունելով Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը մերժել է «Դյուրլանգ» ՍՊԸ-ի հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցին:

«Դյուրլանգ» ՍՊԸ-ն 01.09.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ հուլիսի 4-ին «armeps» համակարգից ստացել է էլեկտրոնային հաղորդագրություն (ժամը 12:50), որին կցված ֆայլը ընթեռնելի չի եղել Ընկերության աշխատանքային համակարգչի ծրագրային խնդիրների պատճառով, որի կարգավորումը տևել է 3-4 օր: Հուլիսի 6-ին պարզաբանում ստանալու նպատակով Ընկերության աշխատակցի կողմից բազմիցս փորձ է արվել կապ հաստատել ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանման հետ՝ 010 66 24 94 հեռախոսահամարով, սակայն չհաջողվելով կապ հաստատել տվյալ մրցույթի համակարգողի հետ՝ Ընկերության աշխատակիցը իր անձնական համակարգչի միջոցով էլեկտրոնային նամակով դիմել է Պատվիրատուին, որում նշել է անձնական հեռախոսահամարը որպես կապի միջոց: Այնուհետև, հուլիսի 7-ի առավոտյան Պատվիրատուն արձագանքելով Ընկերության նամակին, կապ է հաստատել Ընկերության հետ և տեղեկացրել է խնդրի վերաբերյալ, որից հետո անմիջապես

«Դյուրլանգ» ՍՊԸ-ն ուղարկել է շտկումները, սակայն օրենքով հատկացված մեկօրյա ժամկետը սպառվել էր հուլիսի 6-ին:

Այսպես, Կարգի 52-րդ կետի համաձայն՝ ***առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝***

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) ***չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:***

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Այսպիսով, հաշվի առնելով վերագրյալը, Խորհուրդն արձանագրում է, որ «Դյուրլանգ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/5» ծածկագրով ընթացակարգի շրջանակում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ Կարգի 51-րդ կետով սահմանված կարգով և ժամկետում չի շտկել Ընթացակարգի գնահատող հնաձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը:

Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը ***մեկ անգամ է խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը***, հետևաբար Խորհուրդը գտնում է, որ թույլ տրված խախտումը դեռևս բավարար հիմք չէ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով սահմանված կարգով Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 29.08.2017թ. թիվ 03/26-3/15733-17 գրությամբ «Դյուրլանգ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01255238) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ